ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14»

ք.Երևան «20» «05» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Մերուժան Շոթայի Գալստյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Ընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման տասնհինգօրյա ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված № 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված № 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **196200 (մեկ հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված № 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարումն հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի № 1, № 2, № 3 և № 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ	«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 129	ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն. 30
ՀՎՀՀ 01573524	ՀՎՀՀ 00465342
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
900011064087	Հ/Հ 15700 30407870200
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրեն	«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Գալստյան	Ս. Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
« 20 » « 05 » 2019թ. կնքված
«ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14» համարով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

աղյուսակ № 1

Ծառայության						մատուցման	
որակներով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախա-տեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130/1	NISSAN X-TRAIL 2.5L, 2011թ. VIN - JN1TANT31Z01000435 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Ծառայությունների ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է: Ծառայությաների ողջ գնացուցակը ներկայացված է աղյուսակ № 2-ում:	դրամ	196200	1	ք.Երևան	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2019

աղյուսակ № 2

Հ/Հ	Ծառայության անվանումը	Միավորի գինը
1.	Բռնկման համակարգի ստուգում	0
2.	Սառեցման համակարգի ստուգում	0
3.	Յուղման համակարգի ստուգում	0
4.	Արտածման համակարգի ստուգում	0
5.	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
6.	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
7.	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
8.	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1000
9.	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1000
10.	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
11.	ABS համակարգի ստուգում	0
12.	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1000
13.	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0
14.	Թափքի վիճակի ստուգում	0
15.	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
16.	Շարժիչի հանում և տեղադրում	50000
17.	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
18.	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
19.	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	10000
20.	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	10000
21.	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20000
22.	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10000
23.	Շարժիչի գլխիկի վերանորոգում	0
24.	Փականի խցուկի փոխարինում	3000
25.	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5000
26.	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	0
27.	Հրիչների փոխարինում	0
28.	Ատամնավոր փոկի փոխարինում	20000

	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5000
	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	10000
31.	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
32.	Մխոցային օղակների փոխարինում	10000
33.	Թափանիվի հանում և տեղադրում	0
34.	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3000
35.	Յուղի պոմպի փոխարինում	0
36.	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0
37.	Բռնկման կարգավորում	0
38.	CO կարգավորում	0
39.	Խարնարակի հանում և տեղադրում	0
40.	Խարնարակի վերանորոգում	0
41.	Օդի զտիչի փոխարինում	3000
42.	Ինժեկտորի ֆարսունկաների փոխարինում	0
43.	Ինժեկտորի ֆարսունկաների մաքրում	15000
44.	Բենզամղիչի փոխարինում	6000
45.	Վառելիքի զտիչի փոխարինում	3000
46.	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	0
47.	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0
48.	Հովհարի հանում և տեղադրում	0
49.	Ռադիատորի հանում և տեղադրում	10000
50.	Ռադիատորի վերանորոգում	0
51.	Թերմոստատի փոխարինում	10000
52.	Ջրի պոմպի փոխարինում	10000
53.	Ընդարձակող բաքի փոխարինում	0
54.	Խլացուցիչի հանում և տեղադրում	0
55.	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	0
56.	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	10000
57.	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	0
58.	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	25000
59.	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0
60.	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	0
61.	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	0
62.	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	10000
63.	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	10000
64.	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	50000
65.	ԱՓՏ-ի վերանորոգում	20000
66.	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	12000
67.	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
68.	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	30000
69.	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	5000
70.	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	0
71.	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգում	0
72.	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	0
73.	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	0
74.	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0
75.	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	0
76.	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	20000
77.	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	0
78.	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	0
79.	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
80.	Տրավերսի հանում և տեղադրում	0
81.	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	10000
82.	Անվակունդի առանցքակալի փոխարինում	10000
83.	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	10000

	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	0
	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	0
86.	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000
87.	Զսպանակի հանում և տեղադրում	0
88.	Զսպակի հանում և տեղադրում	0
89.	Զսպակի վռանների փոխարինում	0
90.	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000
91.	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5000
92.	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5000
93.	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5000
94.	Միջին ձգանի հանում և տեղադրում	5000
95.	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	5000
96.	Վերևի լծակի հանում և տեղադրում	0
97.	Վերևի լծակի վռանների փոխարինում	5000
98.	Գնդե հոդակապերի փոխարինում	5000
99.	Ծայրակների հանում և տեղադրում	5000
100.	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	5000
101.	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	10000
102.	Հետևի զսպանակի փոխարինում	0
103.	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000
104.	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	5000
105.	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	0
106.	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	5000
107.	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	0
108.	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10000
109.	Անվաբացքի կարագավորում	8000
110.	Ջողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1000
111.	Ղեկային կալունի հանում և տեղադրում	10000
112.	Ղեկային կալունի վերանորոգում	0
113.	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	5000
114.	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	0
115.	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	5000
116.	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5000
117.	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5000
118.	Գլխ. գլանի հանում և տեղադրում	0
119.	Գլխ. գլանի վերանորոգում	0
120.	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	0
121.	Բանկ. գլանի հանում և տեղադրում	5000
122.	Բանկ. գլանի վերանորոգում	0
123.	Արգելակային համակարգի օդահանում	0
124.	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	5000
125.	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	5000
126.	Առջևի սուպպորտի վերանորոգում	0
127.	Հետևի սուպպորտի վերանորոգում	0
128.	Արգելակային փողրակի փոխարինում	0
129.	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000
130.	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000
131.	Հետևի կոճղակների փոխարինում	5000
132.	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	0
133.	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	0
134.	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0
135.	ABS-ի հանում և տեղադրում	0
136.	ABS-ի վերանորոգում	5000
137.	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	5000
138.	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	0

	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	0
140.	Գեներատորի հանում և տեղադրում	5000
141.	Գեներատորի վերանորոգում	10000
142.	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5000
143.	Մեկնարկիչի վերանորոգում	10000
144.	Առջևի լապտերի հանում և տեղադրում	0
145.	Հետևի լապտերի հանում և տեղադրում	0
146.	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	0
147.	Վազքաչափի հանում և տեղադրում	0
148.	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	0
149.	Սարքերի պանելի հանում և տեղադրում	0
150.	Արագաչափի հանում և տեղադրում	0
151.	Ազդանշանի հանում և տեղադրում	0
152.	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	0
153.	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	0
154.	Մագնիտոլայի տեղադրում	0
155.	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	0
156.	էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	0
157.	էլեկտրական տվիչների փոխարինում	3000
158.	էլեկտրական անջատիչների փոխարինում	3000
159.	Վառոցքի մոմերի փոխարինում	10000
160.	Կոնդիցիոների լիցքավորում	20000
161.	Կոնդիցիոների վերանորոգում	0
162.	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին	
163.	1 քառ.դմ - ի համար	2000
164.	Ավտոմեքենայի լվացում	3000
165.	Անիվի հանում և տեղադրում	1000
166.	Անվադողի վերանորոգում	1000
167.	Անիվի բալանս	1000
Ընդամենը՝		681000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ
ք. Երևան, Արմենակյան 129
ՀՎՀՀ 01573524
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011064087
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրեն
Ա. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն. 30
ՀՎՀՀ 00465342
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 30407870200
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Միրզոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված № 2
«20» «05» 2019թ. կնքված
«ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14» համարով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության														
հերթական համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՄ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)											ՀՀ դրամ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	196200	196200	196200	196200	196200	196200	196200	196200	**196200**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ
ք. Երևան, Արմենակյան 129
ՀՎՀՀ 01573524
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011064087
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրեն
Գ. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն. 30
ՀՎՀՀ 00465342
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700 30407870200
«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի տնօրեն
Ս. Մկրտչյան

(ստորագրություն)
Կ.Տ.)

Հավելված N 3
« 20 » « 05 » 2019թ. կնքված
«ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14» համարով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ	«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 129	ք. Երևան, Ա. Ահարոնյան 22 փ. բն. 30
ՀՎՀՀ 01573524	ՀՎՀՀ 00465342
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011064087	Հ/Հ 15700 30407870200

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 20 » « 05 » 2019թ
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 3.1
« 20 » « 05 » 2019թ. կնքված
«ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14» համարով պայմանագրի

ԱԿՏ №_____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև « 20 » « 05 » 2019թ. Կնքված № «ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԾՁԲ-19/14» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2019թ հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն